ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
Վ. ՋԻԼԱՎՅԱՆ

«13» 07 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000052

Ձեռնարկողը՝ ***«Վելլի Բեյ» ՍՊԸ***
Ք. Երևան, Միկոյան 9/3

Գործունեությունը՝ ***Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Միկոյան 9/3 հասցեում ռեստորանային համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000052

<13> 07 2020թ.

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Միկոյան 9/3 հասցեում նախատեսվող ռեստորանային համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝ «Վելլի Բեյ» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝ «Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝ ք. Երևան, Նոր Նորք վարչական շրջան

«Վելլի Բեյ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Միկոյան 9/3 հողամասում կառուցել ռեստորանային համալիր:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 3.704հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Նկարագրական մաս. Կառուցապատման ենթակա տարածքում առկա է տեղանքին բնորոշ խոտածածկ, մասնակի ասֆալտապատ տարածք: Նախկինում գոյություն ունեցող 650.34քմ ընդհանուր մակերեսով շինությունը ապամոնտաժված է, շիանարարական աղբը՝ հեռացված:

Տարածքում բացակայում են պատմամշակութային արժեք ներկայացնող կառույցները կամ հուշարձանները: Հիդրոերկրաբանական տեսակետից կառուցապատվող տարածքում գրունտային ջրերը գտնվում են 70.0 մետրից ցածր հորիզոններում:

Նախատեսվում է կառուցել 4 մասնաշենքերից բաղկացած ռեստորանային համալիր:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է տվյալ միջավայրում առկա կառույցներին և չի հանդիսանում տեսադաշտի խոչընդոտ շրջակա բնակչության համար:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

Հողատարածքի ընդհանուր մակերես – 3.704հա

Կառուցապատման մակերես – 2.515քմ

Ճանապարհային ծածկույթ և վերգետնյա ավտոկայանատեղի – 7.482քմ

Մայթեր – 1.037,7քմ

Հետիոտնային արահետներ – 950քմ

Կանաչապատման մակերես – 25.055,3քմ:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
STATE ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
РА ЕРЕВАН ГОСУДАРСТВЕННЫЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ ГНО
02543169
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Բազմահարկ բնակելի համալիրի էլեկտրամատակարարումն իրականացվելու է տարածքով անցնող էլեկտրական ցանցից՝ 550կվտ հզորությամբ:

Գազամատակարարումը նախատեսվում է իրականացնել նախատեսվող գործունեության տարածքում գոյություն ունեցող գազատարից, որը նախկինում շահագործվել է ռեստորանային նախկին համալիրի կողմից:

Ռեստորանային համալիրի ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել Մամիկոնյան փողոցով անցնող քաղաքային ջրագծից: Նախատեսվում է իրականացնել տաք և սառը ջրամատակարարում, կոյուղու և անձրևաջրերի հեռացման, ինչպես նաև հակահրդեհային սնուցող ցանց: Անձրևաջրերի հեռացումը իրականացվելու է անձրևատար կանգնակների միջոցով՝ D=100-10մմ տրամագծով խողովակներով, որոնք կմիացվեն քաղաքային անձրևատար համակարգին:

Ռեստորանային համալիրի 1-ին մասնաշենքի տանիքում կառուցվելու է 40մ² մակերեսով կաթսայատուն: Կաթսայատանը տեղադրվելու է Qջ.=400.000կկալ/ժ ջերմարտադրողությամբ 2 կաթսաներ (յուրաքանչյուրը 500կվտ), որոնք նախատեսված են համալիրի ջեռուցման համար և 4 հատ Qջ.=30.960կկալ/ժ ջերմարտադրողությամբ պատին կախովի կաթսաներ՝ տաք ջրամատակարարման նպատակով:

Շինարարական աշխատանքների տևողությունը հաշվարկվել է 28 ամիս:

Շինարարության ժամանակ բնառեսուրսից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու, կենցաղային նպատակների համար: Շինարարության համար ջրամատակարարումը կիրականացվի համայնքային ջրատարից: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (29 մարդ) և կազմել 430մ³: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 396մ³: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 826մ³:

Երկաթբետոնե հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 21.938մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից 4253մ³ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, իսկ մնացած 17.685մ³ կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարական աշխատանքերի ընթացքում կառաջանա կենցաղային աղբ՝ 2.200կգ ծավալով, որը կտեղափոխվի մոտակա աղբավայր:

Շինհրապարակում շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը կկազմակերպվի այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շինարարական աշխատանքների անընդհատությունը:

Նոր կառուցվող բնակելի շենքերի շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում: Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները կանխարգելելու և շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված է.

– փոշու արտանետումները նվազեցնելու նպատակով շինհրապարակի տարածքում պարբերական ջրցանում,
– փոշու տարածումը կանխարգելելու նպատակով շինհրապարակում արտաքին նյութերի ժամանակավոր կուտակումների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով,
– շինարարական նյութերի տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,
– շինհրապարակում մեքենաների արագության սահմանափակում,
– խլացուցիչներով մեքենաների օգտագործում,

– վառելանյութի և յուղի հոսքը կանխելու նպատակով փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում,

– հողաբուսաշերտի ժամանակավոր պահեստավորում դրա համար նախատեսված առանձնացված վայրում՝ 2-3 մ բարձրությամբ կույտերի տեսքով՝ կողային շեպի 1:2 (25°) առավելագույն թեքությամբ,

– շինհրապարակի ցանկապատում, համապատասխան տեղեկատվական ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում,

– փոշու առաջացումը և շին աղբի երկարատև կուտակումը բացառելու նպատակով՝ կանոնավոր կերպով (ամենաուշը 2 օրը մեկ անգամ) շինհրապարակից շինարարական թափոնների ու աղբի հեռացում,

– աշխատանքների ավարտից հետո տարածքների մաքրում և առաջացած թափոնների տեղափոխում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

– կանաչապատման իրականացում համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի,

Բնապահպանական միջոցառումների համար ծախսերի գումարային գնահատումը կազմում է 23.000.000 մլն դրամ:

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը կբարեկարգվի և կկանաչապատվի:

Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը համաձայնեցվել է Երևանի քաղաքապետարանի հետ: Ըստ կանաչապատման նախագծի տարածքում տնկվելու են 12հատ մշտադալար եղևնի, 20.000հատ դեկորատիվ և ծաղկող թփեր, 163քմ ծաղկանոց, 2.171քմ բնական ճիմ, 6.570քմ սիզամարգ, պտղատու և դեկորատիվ ծառեր:

Նախատեվող գործունեության տարածքում նախատեսվում է իրականացնել մակերեսային ոռոգում:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, առողջապահության նախարարությունը, քաղաքաշինության կոմիտեն: Դիտողությունների և առաջարկությունների արդյունքում հայտը լրամշակվել է: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Նոր Նորք վարչական շրջանի Դավիթ Բեկի 286/6 հասցեում անցկացվել են հանրային քննարկումներ, գործունեության իրականացումը հանրության կողմից արժանացել է հավանության:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

- Նախատեսվող գործունեության էլեկտրամատակարարումը, գազամատակարարումը, ջրամատակարարումն իրականացնել տեխնիկական պայմանների համապատասխան:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական նորմերը և պահանջները:

- Ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և պահպանումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Վելլի Բեյ» ՍՊԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Միկոյան 9/3 հողամասում նախատեսվող ռեստորանային համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Հ. Ալեքսանյան